ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԼՆԱԿՑՈՒԹԻՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԹԱԲԹԱԹԵՐԹ

ԳԼԽԱՎՈՐՈՒԹԻՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ
ԱՄԵՆ ԼԵՌՈՎ

Առաջին էջում տողը (petite) 6 շահի
Վերջին ,, ,, ,, 3 շահի

ԳԻՆԸ ԱՆՓՈՓՈԽԱԿԱՆ է

Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում ,, 2 ղր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ
8 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse" Tauris (Perse) | ادارهٔ روزنامهٔ «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն «Գաղթականական Բիւրո» Հայկ Իսպիսանեանին

Բ. ՏԱՐԻ — № 15 ՀԻՆԳՇԱԲԹԻ 20 (3) ՅՈՒՆԻՍ 1919 Թ. — Բ. ՏԱՐԻ

ԱՄԱՐԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Կազմակերպւում են ամարային դասընթացքներ Թաւրիզի հայկական, Թեմական և Ժխական դպրոցների վերաբերեալ աշակերտուհիների համար—բոլոր առարկաներից.

Ա. Տ. Օհանեան
Հ. Իսպիսանեան
Հ. Տ. Օհանեան

3—3

ԷՋՐՈՒԵՏՍԿՈՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ VI-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

I

Ապրպ. Հ. Յ. Դաշնակցութեան VI-րդ շրջանային ժողովը բացուեց յունիս 10-ին. ժողովի աշխատանքները վերջացան 16-ին. ժողովի օրակարգը ժամանակին տրպտուեց մեր թերթերում.

Մենք մի կողմ պիտի թողնենք այն, թէ ինչպիսի պայմաններում գումարուեց շրջ. ժողովը, այլ պիտի խօսենք զլխաւորապէս ժողովի աշխատանքների և ընդհանուր եզրակացութիւնների մասին.

Եթէ մի բառով մոռանալու լինենք առօրեականն ու ներկան և յետադարձ հայեացք ձգելու լինենք վերջին տարիների բաղաքական փոթորկալի անցքերի վրայ, մեր առաջ կը պատկերանայ քաղաքական և տնտեսական մի այնպիսի սաղնապալի կացութիւն, որ վստահաբանում է մեր մինչ այժմ ապրած օրերի՝

Բոլշեւիկացած զօրքի տարեբալին նահանջ, դրան յաջորդող ներքին անարխիայ և կրքերի յարու

, հարեան ժողովրդների՝ մի կողմից աշխատաւորութեան—համերաշխութեան ձգտող—ձեռքի մեկնումն, միւս կողմից կրօնական մոլեռանդութեան և իմպերիալիստական անյագ ձգտումներով և «լուսաւոր» յոյսերով արբած ֆեօդալ բուրժուազիայի դաւերը ու որոգայթները և խուսափողական քաղաքակ. երրորդ կողմից—վերոյիշեալների հետանմիջականօրէն կապող—տանկական զօրքի և բիւրդ ու թուրք ոանդաների ազէտարեր ներխուժումը, և հայաջինջ քաղաքականութիւն—Ճնտեսական ատ. ոգ ճրգնաժամ. Սրածութիւն, գաղթ կայն կայն. Ահա այն ընդհանուր կացութիւնը. որ ապրեց մեր ժողովուրդը, որին ինչ տեսակէտից և ինչ ճանապարհով էլ որ մօտենալու լինենք, չենք կարող խուսափել արտակարգ ծանր եւ աղեռաբեր եւ մղձաւանջային քարոների որակումից.

Վերոյիշեալ պայմաններում և հանգամանքներում ապրող և գործող որ սոցիալիստական աշքի ընկնող կուսակցութիւն էլ որ վերցնելու լինենք (խօսքս միայն դաշնակցութեան մասին չէ. այլ և Անդրկովկասի միւս կուսակցութ.) չնայած գործադրած դերմարդկային ճիգերին՝ համերաշխութիւն և համագործակցութիւն ստեղծելու—ազէտը չեզոքացնելու կամ քիչ թէ շատ մեղմելու—հանդիպել են—թէև իրենց բարեկամ համարող, բայց իսկապէս թշնամի կողմի դատապարտութեան, անլուր խաբէութեան և որոգայթների.

Մեր նպատակը չէ համեմատելու և գնահատելու մեր և ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների գործունէութիւնն ու քաղաքականութիւնը, այլ մեր նպատակն է՝ նկատի առնել մեր երկրի վերջին երկու տարիների սոցիալ-քաղաքական և տնտեսական պայմանները, թեթեւօրէն յիշատակելով հարեան ժողովրդի բուրժուազիայի դիրքը և գործելակերպը և ասել. արդեօք Դաշնակցութեան գործունէութիւնը ուրիշ կերպ կարող էր վարուել, քան այն, որ համերաշխութեան ու համագործակցութեան ձեռք մեկնել հարեան սպարապետ ժողովրդին մոռնանք ծանր կացութիւնը մեղմելու և աղէտի—որ կոթանարար էր թէ հայ և թէ թուրք աշխատաւորութեան համար—առաջն առնելու. Այդ պայմանների մէջ Դաշնակցութեան գործունէութիւնը հանդիսանում է աւելի քան խոհեմ, համերաշխութեան ձգտող և գնահատելի. Որպէս հայ իրականութեան մէջ միակ միտ և ուժեղ սոցիալիստական կուսակցութիւնը, Դաշնակցութիւնը իր ուսերին առնում էր ամենամեծ և պատասխանատու գործը. Ուզողը է այստեղ յիշել այն անաղարտ և կրքոտ մեղադրանքների ու հայհոյանքների մասին, որ տեղում էին և են Դաշնակցութեան վրայ. հերիք է միայն ասել, որ այդ բոլոր հայհոյանքները Դաշնակցութեան անուան նշանախեց անգամ արատ չեն կարող հասցնել և ոչ էլ վարկը զցել. Հայ աշխատաւորութիւնը այժմ աւելի քան հաւոզուած է, որ իր միակ հզօր պաշտպանը Դաշնակցութիւնն է մեր իրականութեան մէջ քան մի օրէնք այլ կուսակցութիւն.

(Եարոսլաւլի)

Berta

ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Ցաճախ սահմանադրական միապետութիւն և միապետութիւն միատեղ լսելիս մենք արտաքուստ ոչ մի տարբերութիւն այդ երկու կառավարական ձևերի մէջ չենք գտնում. սակայն եթէ քիչ խորթափանց լինենք և այդ երկուսը, (ի հարկէ իրաքանչիւրն իր ամենալայն իմաստով հասկանալով) իրար հետ համեմատելու լինենք, կը գտնենք երկու հակադիր ծայրեղ հակադրութիւններ. Ամենաաջաս կարգերով կառավարող պետութիւն ասելով, յաճախ հասկացուում է մի այնպիսի պետութիւն, ուր ամեն մի անհատ կարող է ապրել այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում, կամ անել այն, ինչ նրան թելադրում է իր քմահաճոյքը. սակայն բնականաբար այդ այդպէս չէ, որովհետև այս ձևի կառավարութեան մէջ իրաքանչիւր անհատ պարտաւոր է ենթարկուել երկրի օրէնքներին, հակառակ դէպքում ենթարկուել պատասխանատուութեան, որովհետև մի օրէնքի գործադրումը կասեցնելով այսպէս թէ այնպէս նա վնասում է մի ուրիշ անհատի. մի բան, որ մի անիցէ ամբողջ պետութեան մէջ աւելի քան չպիտի թոյլատրուի.

Իրաքանչիւրը պետութեան մէջ, ուր թագաւորն է օրէնսդիրը՝ նա միշտ կարող է ուշնչացնել այն օրէնքը, որն իր իրաւունքները սահմանափակում կամ իրեն շահերին համապատասխան չէ, ուր այդ միապետն է հրաւիրում մինիստրական կաբինետ, որ միայն իրեն՝ թագաւորի առաջ է պատասխանատու իր գործունէութեան համար, և ուր գատական իշխանութիւնն ևս կախուած է միապետից. իսկ գահը ժառանգաբար անցնում է սերունդէ-սերունդ, իրաքանչիւր այդպիսի կառավարութիւն կոչուում է բացարձակ կամ անսահման միապետութիւն. Իսկ այն երկրում, ուր միապետի իրաւունքները սահմանափակուած են ժողովրդական ներկայացուցչութեան—պարլամենտի գոյութեամբ, կոչուում է սահմանադրական միապետութիւն. եթէ այս վերջինը գործադրում է իր ամենալայն գնմոկրատիկ սկզբունքներով՝ կազմում է առաջնի լիակատար հակադրութիւնը. որովհետև մինչդեռ այստեղ պետութիւնը կառավարում է ժողովրդի, բացարձակ միապետութեան մէջ ընդհակառակը, միապետի թելադրանքով.

Սահմանադրական միապետութեան մէջ, մինիստրների կազմած

օրէնքները՝ միապետը հաստատում է պատգամաւորների քննութիւնից և ընդունելուց յետոյ, որից յետոյ միայն այդ օրէնքը կարող է գործադրութեան անցնել։ Այսպիսով օրէնսդիր իշխանութիւնը գտնւում է ժողովրդական ներկայացուցիչների՝ ժողովի—պարլամենտի ձեռքում։ Պարլամենտի այդ իրաւասութիւնը լինում է սահմանափակ կամ լայն նայած թէ մի միապետական երկրում ընդունուած է պառլամենտարիզմը թէ ոչ։ Առաջին դէպքում մինիստրները, որ հրաւիրուած են թագաւորից պատասխանատու են իրենց գործունէութեան համար պարլամենտի և ոչ թէ թագաւորի առաջ. եթէ պարլամենտը իւր անվստահութիւնն է յայտնում մինիստրական կազմի կամ թէկուզ նրանցից մէկի կամ մի քանիսի վերաբերմամբ, թագաւորը պէտք է արձակէ այդ կաբինետը, իսկ հակառակ դէպքում, շատ-շատ նա՝ թագաւորը կարող է ցրել պարլամենտը և նորը հրաւիրել, նպատակ ունենալով իմանալ թէ պարլամենտը ժողովրդի արտայայտիչն է թէ ոչ. եթէ այո, ուրեմն նա կամաց-կամաց ստիպուած է ցրել մինիստրութիւնը և նոր կաբինետ հրաւիրել։

Բնականաբար նա՝ պարլամենտ չհրաւիրելու իրաւունք չունի և չի էլ կարող որովհետև նախ դժգոհութիւն առաջ կը գայ և երկրորդ էլ նա դրամ չի ունենայ, այն օրէնքի համաձայն, որ առանց պարլամենտի ցանկութեան թագաւորն իրաւունք չունի հարկեր կամ տուրքերի չափ նշանակել։

Վերոյիշեալ օրէնքի (պարլամենտարիզմի) անմիջական հետևանքն է այն օրէնքը որ հիմնուած այն բանի վրայ, որ թագաւորի անձն ազատ է որևէ պատասխանատուութիւնից, թագաւորի քմահաճոյքները սահմանափակելու և թագաւորի արած վնասակար կարգադրութիւնների վտանգից խուսափելու համար թագաւորի իւրաքանչիւր կարգադրութիւնը պէտք կրի մինիստրներից մէկի ստորագրութիւնն, որովհետև իւրաքանչիւր մինիստր պատասխանատու է պարլամենտի առաջ. ուստի և միապետի իւրաքանչիւր առաջարկած օրէնքը միայն պարլամենտի հաւանութեամբ կարող է անցնել, որովհետև հակառակ դէպքում մինիստրներից ոչ մէկը չի համաձայնի ստորագրել վախենալով պատասխանատուութիւնից։

Այսպիսով տեսնում ենք, որ բոլոր սահմանադրական երկրներում իշխանութիւնը բաժանւում է երեք կարգերի օրէնսդրական, գործադիր եւ դատական։ Որովհետև երկրի միակ տնօրինութիւնը գտնւում է օրէնսդրական իշխանութեան ձեռքին, ուրեմն և նա է կարևորագոյնը վերոյիշեալների մէջ. եթէ մի երկրում իշխում են սոսկ սահմանադրական կարգեր—առանց պարլամենտարիզմի, այդ երկրում բարձրագոյն իշխանութիւնը գտնւում է մասամբ ժողովրդի. մասամբ էլ միապետի ձեռքին. խօսք չի կարող լինել իհարկէ բացարձակ միապետական երկրների մասին, ուր ամբողջ իշխանութիւնը գտնւում է միապետի ձեռքին։ Իսկ ընդհակառակն ամեն մի երկիր, ուր գոյութիւն ունի պարլամենտ պարլամենտարիզմի իրաւունքով, այնտեղ վերոյիշեալ երեք—օրէնսդրական, գործադիր և դատական—իշխանութիւններն էլ ուղղակի թէ անուղղակի կախուած են պարլամենտից, որ ներկայացուցիչն է ժողովրդի, հետևաբար և անուղղակի կերպով՝ ժողովրդից։

Հրաչ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐՕՏ

Berta-ին

Տանջանքներ, տենչանքներ իմ հոգում,
Կարօտի յուզումներ... սպասում,
Ու՜մ գտնեմ երգերդ իմ երգում,
Սակայն ո՞ւմ...

Ամէն օր կանչում եմ ու կանչում,
Արցունքի գիշերներ... մինչև ե՞րբ
Ես կանչում, սպասում—դու տանջում,
Մինչև ե՞րբ...

Ո՞ւր գնամ որ գտնեմ քեզ կրկին,
Մինչև ուր թափառեմ ամենուր.
Քեզ գտնեմ ու սեղմեմ իմ կրծքին,
Մինչև ո՞ւր...

Տանջանքներ, տենչանքներ ու թախիծ,
Երկուսս էլ կարօտում ենք իրար,
Չեն թողնում որ քոյլիս դէպի ինձ,
Չի թողնում աշխարհը խելագար՝
Նորից մենք
միանանք
ու սիրենք.

Ե. Մ.

ԴԱՍԸՆԿԵՐՈՒՀԻՍ

Մառուղիի նաւարանին հեզօրէն,
Անրջածին մի աղջիկ կայ նստած
լուռ,
— Ծնո՞րք է այն որ կը ժպտայ
մեղմօրէն,
Թէ մի ուրու յաւերժական հեգ ու
լուռ.
Ոսկեղենիկ արշալո՞յս է նրածին,
Որ կը նայէ չարաճճի աչքերով,
Թէ մարմնացած երջանկութիւն երկնածին,
Արևավառ ու կախարդիչ հայեացքով։
«Միակօծ պիտի լինի՝ աղջիկն այն
սիրունս»
Կմտածեմ ինքս իմ մէջ ամօթով,
Այն պատկերը նկարուած կայ իմ
սրտում,
Անմահութեան կրակնացայտ լոյծնով։
«Դասընկերներ ենք» — հիմա կը
յիշեմ,
Սիրոս կոյսալ անհնութիւն մի անծիր,
Մենք իրարից շատ հեռու ենք էլ
գիտեմ.
Մենք իրար դէմ նա երկինք է ես
երկիր։

Գ. Տէր-Բաղդասարեան

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

(Շարունակութիւն)

Հեռու չէ այն օրը, երբ ամբողջ աշխարհում պիտի բռնկի յեղափոխական կրակը. իմպերիալիզմը իւր հոգևարքն է ապրում. բուրժուազիան իր գլուխը կորցրել է, նա իւր վերջին զօրահաւաքն է կատարում. պիտի պատրաստ լինել։ Յեղափոխական աշակերտութեան դերը մեծ է ապագայ հասարակարգի ստեղծման մէջ. պիտի լինել միշտ արթուն, միշտ զգաստ։

Ներկայ աշակերտութիւնը, որը պիտի դառնայ աշխատաւորութեան ապագայ ջոկատներից առաջնորդը, չը պիտի գործէ այն սխալները, որ արել են իր նախնիները. նա պիտի մոռանայ անցեալի տխուր յիշողութիւնները, բոլոր այն վիրաւորանքները որ նա կրել է. նա պիտի ձեռք մեկնէ թէ թուրք, թէ հայ, թէ քուրդ աշխատաւորութեան հարուածելու այն ընդհանուր թշնամուն, որ հանդիսանում է հարստահարողների, բուրժուաների, ֆէոդալների և աղաների վոհմակը։

Մասնաւորապէս Պարսկաստանում Հ. Յ. Դաշ. աշակերտութիւնը մեծ պարտականութիւն ունի կատարելու. նա թուրք աշխատաւորութեան մէջ ևս պիտի գործէ, չպիտի այնպիսի տակտիկա ընդունէ, որ կը ժխտանցնէ հայ աշխատաւորութիւնը թուրք աշխատաւորութիւնից։ Նա թուրք աշխատաւորութեանը պիտի ցոյց տայ յաւիտենական խաղաղութեան, հաւասարութեան և ազատութեան (ոչ բուրժուական հասկացողութեամբ) ճանապարհը. հանդիսանալ նրա առաջնորդը, գործակցել նրա յեղափոխական տարրերի հետ կործանելու համար բռնապետութիւնը, ֆէոդալական կարգերը։

Մեծ գործեր կան կատարելու, այդ յեղափոխական աշխատանքները կատարելու համար մեծ աշխատանք է հարկաւոր. պիտի կրթուել, սոցիալիստական գրականութիւնը ուսումնասիրել, և լինել միշտ պատրաստ. անպատրաստից աշխատանքը ոչ միայն արդիւնք չի ունենայ, այլ և կը հարուածէ այն մեծ գործի խափանելուն, որին ձգտում ենք ամենքս։

Ուրեմն լինենք աշխատանքի կազմակերպուենք, որպէս զի դասատանի օրը պատրաստ լինենք։ Սոցիալիզմի յաղթանակը աշխատաւորութեան գործը պիտի լինի։

Վ. Յովհաննիսեան

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վէյմարի ազգային ժողովը ձայների մեծամասնութեամբ որոշել է ստորագրել դաշնակիցների առաջարկած՝ հաշտութեան պայմանները։

— Հաշտութեան վեհաժողովը որոշել է Մեծ Հայաստանի մէջ ճանաչել Բաթումն ու Սամսոնը և նրանց մէջ ընկած հողաշերտը, նաև Մերսինն ու Տարսոնը։ Ամերիկայի հրաժարուելու դէպքում, Ֆրանսիան ձգտում է հովանաւորել Հայաստանը։

Բաթում 22 յունիսի. — Պոլսից թերթերն յաղորդում են, որ Իթթիհատականների ձերբակալուած պարագլուխները աքսորւում են Պոլսից, Բանդարկեալները փոխադրւում են Սալոնիկի Ալատինի պալատը։ Աքսորեալների թւումն է Աճմէդ բէգ Աղաևը։

— Նախկին Տաճկահայաստանում այս տարի հաւանաբար ներգաղթ տեղի չի ունենայ։ Ամերիկեան և անգլիական ներկայացուցիչները գաղթականութեան Կովկասում պահելու միջոցների մասին են հոգում։

Զօրավար Անդրանիկը Սելանիկի մէջ.

Զօրավար Անդրանիկը, որ Պոլսէն անցեր է առանց ցամաք ելնելու, հասեր է Սելանիկ, ուր այցելելով Հելլէն զօրաց ընդհանուր հրամանատարին և Սելանիկի ժէներալ նահանգապետին, սիրալիր ընդունելութիւն գտած է ամենուն. Զօր. Անդրանիկ իր տեսակցութեան մէջ պետքը չէ ըսեր է հայ և յոյն ժողովուրդներու սերտ գործակցութեան։

Էնվէր փաշան Ղարապաղի մէջ.

Արժանահաւատ աղբիւրների համաձայն Էնվէր փաշան կը գտնուի Ղարապաղի մէջ։

Հայաստանի մանդատի հարցը ամերիկեան կոնգրեսի առջև

Ամերիկեան կոնգրէս պիտի գումարուի յուլիս 6-ին և պիտի տայ իր որոշումը թէ Ամերիկան պիտի ընդունի Հայաստանի մանդատը թէ ոչ։

Թալէաթը կը յանձնեն դաշնակիցներուն.

Դիւանագիտական շրջանակներէ կը տեղեկանանք, որ հաշտութեան Կոնֆերանսի գերման պատուիրակները համաձայնած են դաշնակիցներուն յանձնել Թալէաթին իթթիհատականներու միւս պարագլուխները, որոնք Գերմանիա ապաստանած են։

Խմբագրական մարմին